Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարանի Վ. Եղիազարյանի անվան հ. 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հասարակագիտություն (5 դասաժամ), տեխնոլոգիա (1 դասաժամ) և երաժշտություն (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցակացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Ուսուցչի թափուր տեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) Անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) Ինքնակենսագրություն (Ձև 5),
6) Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հ Հ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10) Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում)

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2024թ. հունիսի 18-ից մինչև հուլիսի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00- 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հուլիսի 04-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի Վ. Եղիազարյանի անվան հ. 1 հիմնական դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Գ. Նժդեհի 20/2:

Տեղեկությունների համար զանգահարել (0252) 2-44-49 հեռախոսահամարով: